



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՅԻՒՍՈՒՍԿՅԵԼ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՏՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY  
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA  
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



Ա. ՔԱՂԱՔԱՆԻՑ ՄԱՆԿԱՆՑ ՏՕՆԻՆ ԵՒ ՕՐԵՆԾ ՔԱՂԻՆԹԻԻ ԵԿԵՂԵՑԻՆՑ  
ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՎՈՒԹՈՎ

**ՀԱՒՏԹԵ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆ ՄԵՐ ԿԵԱՆՔԸ ԿՊՐԻՆՔ  
ՄԱՅՈՒՐ ԽԴՄՄՏԱՆՔՈՎ, ՄՐԲՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՅԱՐԱՏԵՒ ԱԴՈԹԵԼՈՎ**

**ՊԱՏԳԱՄԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱՋԱՆ ՀԱՅՐԸ**

Կիրակի, 2 Մարտին, Սրբոց Զառասնից Մանկանց տօնին եւ Օրենք Զառունթիի Եկեղեցւոյ անուանակոչութեան առթիւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան, Եպիսկոպոսական հանդիսաւոր Սուրբ պատարագ մատոյց եւ իր հոգեւոր պատգամը ուղղեց գաղութի զաւակներուն, շեշտելով աղօթքին անհրաժեշտութիւնը հայ անհատին ու ընտանիքի կեանքեն Ներս, իբրեւ միջոց Վերանորոգութեան, հաւատքի ամրապնդման եւ Կստուծոյ հետ հաղորդակցութեան:

Սուրբ Սեղանին սպասարկեցին Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքի զոյգ Վարիչ Յայր սուրբերը եւ Եկեղեցւոյ հոգեւոր հովիւը:

Նախքան իր քարոզը, Առաջնորդ Սրբազանը նախ անդրադարձաւ Յայատանի վերջին իրադարձութիւններուն, բոլորին կոչ ուղղելով խաղաղութեան, կայունութեան եւ համերաշխութեան ուղին ընտրելու, հրաւիրելով հաւատացեալները աղօթելու հայրենիքի հզօրացման, իշխանութեանց իմաստութեամբ լեցուելու եւ առաջնորդելու եւ ժողովուրդին բարօր ու խաղաղ կեանքի համար:

Սրբազան Յայրը քարոզի բնաբան ընտրած էր Սրբոց Զառասնից Մանկանց նուիրուած շարականի հետեւեալ տունը. «Այսօր Կստուծոյ Որդիին Եջրով Սեբաստիան երկրորդ Յորդանան եղաւ, եւ անճառելի պսակները կը փայլեին քառասուն սուրբերուն վրայ. Եւ անոնք միաձայն կ'ըսէին՝ օրինեալ ես ամենօրինեալ անմահ Թագաւոր»: Առաջնորդ Սրբազանը պատմեց 4-րդ դարուն ապրած հաւատքի ախոյեաններուն՝ Սրբոց Զառասնից Մանկանց վարքին ու նահատակութեան մասին, որոնք Սեբաստիոյ լիճին մեջ Քրիստոսի հանդեպ իրենց ունեցած խոր սիրոյն ու կապուածութեան գործնական վկայութիւնը տուին իրենց արեան հեղումով եւ չարաչար տանջուելէ ետք իրենց նահատակութեամբ: Շարականին բառերէն մեկնելով, Սրբազանը շեշտեց այս, որ Սեբաստիոյ լիճը Զառասուն

մանուկներուն համար դարձաւ երկրորդ Յորդանան մը, յաւիտենական կեանքի առաջնորդող ճանապարհը, որով անոնք արժանի եղան փառաց պսակին արժանանալու եւ յաւիտեան յիշուելու: Այսօր մենք եւս, շեշտեց Սրբազն Հայրը, Սեբաստիոյ Նահատակներուն նման կոչուած ենք հաւատքի մեր ուխտը վերանորոգելու, հաւատքի ճանապարհորդութեան մեր կեանքը ապրելու մաքուր խղճմտանքով, սրբութեամբ եւ յարատեւ աղօթելով:

Եւ Դատաւորի Կիրակիի խորհուրդն ալ արդէն այդ կը պատգամէ մեզի՝ յարատեւ աղօթել առանց ծանծրանալու: Ուստի օրուան խորհուրդն թելադրուած, Սրբազնը վեր առաւ աղօթքին անհրաժեշտութիւնը հաւատացեալի կեանքին մէջ, աղօթքը համարելով Աստուծոյ հետ հաղորդակցելու ազդու միջոց եւ մեր խնդրանքներն ու մարդկային մեր կարիքները Ամենակալին Գահին դիմաց բերելու աղերս:

Ապա Սրբազնը, շարականագրին բառերը փոխ առնելով, դիմեց Քառասնից Մանկանց բարեխօսութեան, աղօթելով. «Ո՞վ սուրբեր եւ քրիստոս սիրուածներ, աշխարհի լուսաւորիչներ, սուրբ Եկեղեցւոյ պարծանքներ, Տիրոջ մօտ մեզի համար բարեխօսեցեք»:

## ՄԱՏԱՂՈՐԾՆԵՔ

Ս. Պատարագի աւարտին եւ հոգեհանգստեան արարողութենեն Ետք, Սրբազն Հայրը Նախ կատարեց պաշտօնական բացումը եւ օրինութիւնը նորակառոյց Առաջնորդական գահին, բարերարութեամբ Տեր եւ Տիկին Բարսեղ եւ Մարի Եաղմուրեանի: Ապա շրջապատուած հոգեւորականաց եւ դպրաց դասերով, Առաջնորդ Սրբազնը թափօրով առաջնորդուեցաւ Եկեղեցւոյ կողքին գտնուող «Դուկանեան» սրահը, ուր, հաւատացեալսներու խիտ բազմութեան Ներկայութեամբ, օրինեց Եկեղեցւոյ անուանակոչութեան տօնին առիթով պատրաստուած Մատաղը: Մատաղորինեցի աւարտին, Ներկաները խանդավառութեամբ երգեցին «Կիլիկիա»ն եւ «Մեր Հայրենիք»ը:

Արարողութիւններէն Ետք տեղի ունեցաւ սիրոյ ճաշ: Հաւատացեալներ միասնաբար ճաշակեցին Տիկնանց Միութեան պատրաստած մատաղը: Սիրոյ ճաշի ընթացքին Եկեղեցւոյ Յոգեւոր Յովիլ՝ Արժ. Տ. Յրանդ Քինյ. Երեցեան, Եկեղեցւոյ ընտանիքին անունով իր որդիական սերն ու շնորհակալութիւնը յայտնեց Առաջնորդ Սրբազն Յօր, որ իր օրինաբեր Ներկայութեամբ կը պատուէր գաղութը: Գևահատանքի եւ շնորհակալութեան խօսքով հանդիս Եկաւ Նաեւ Ազգային Վարչութեան ատենապետ Տոքթ. Կարօ Յակոբեան:

Վերջին խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազնը. ան բարձր գևահատեց Օրէնք Քառունթիի մեծ ընտանիքը եւ հրաւիրեց բոլորին Յունիս ամսուն պատրաստուիլ տօնելու Եկեղեցւոյ կառուցման 20 ամեակը:

Քրիստոնեական սիրոյ եւ հայաբոյր մթնոլորտի մէջ վերջ գտաւ օրուան հոգեպարար խորհուրդն ու սիրոյ ճաշը, որմէ Ետք Ներկաները տուն վերադարձաւ հոգեկան գոհունակութեամբ եւ ուրախ սրտով:

ON THE FEAST OF THE FORTY MARTYRS AND THE NAME DAY OF FORTY  
MARTYRS CHURCH

**LET US CONTINUE ON OUR JOURNEY OF FAITH WITH  
CONSCIENCE AND PRAYER**

On Sunday, March 2<sup>nd</sup>, the Feast of the Forty Martyrs and the name day of Forty Martyrs Church in Orange County were celebrated with Episcopal Divine Liturgy celebrated by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, who also delivered the sermon.

The Prelate was assisted at the altar by Christian Education Department Directors Very Rev. Fathers Muron Aznikian and Barthev Gulumian.

Prior to his sermon the Prelate spoke of the events unfolding in Armenia and urged the faithful to pray for peace and stability.

The Prelate began his sermon by extolling the life and martyrdom of our champions of faith, the Forty Martyrs, who gave their lives for their faith and their deep love of our Lord Jesus Christ. The Prelate referenced the hymn dedicated to the Forty Martyrs stressing that the lake in Sebastia became the path that led them to eternal life and asserted that like the Forty Martyrs, we too are called to renew our faith and to live our lives with conscience and prayer. The Sunday of the Judge gives us this same message, to constantly and tirelessly pray. The Prelate emphasized the importance of prayer as a means of communicating with God and bringing before Him our supplications.

At the conclusion of Divine Liturgy and requiem services, the Prelate conducted the blessing of the new Bishop's Throne which was sponsored by Mr. and Mrs. Parsegh and Marie Yaghmourian. He was then led in a procession to "Gugasian" Hall where he blessed the *madagh*. During the reception that followed parish pastor Rev. Fr. Hrant Yeretsian thanked the Prelate for his celebrating the name day of the church with the parish members. Congratulatory remarks were also offered by Executive Council Chair Dr. Garo Agopian.

Closing remarks were offered by the Prelate during which he commended the members and servants of the church for their work in advancing the parish and called on them to prepare to celebrate the 20<sup>th</sup> anniversary of the establishment of the church in June.